Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ ԹԻՎ 4-Ա-6-Ա ԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 7-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 4-Ա և 6-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ է հղում կատարել նաև ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 17-րդ և 18-րդ կետերին:

Բացի այդ, որոշումները չեն համապատասխանում վերը նշված կետերի պահանջներին, համաձայն որոնց համայնքի ղեկավարը միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում համայնքի ավագանու «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագիծը (հողաշինարարական գործի գծագրական մասի հավելվածի հետ միասին) ներկայացնում է համայնքի ավագանուն՝ հաստատման և առաջարկում ընդգրկել ավագանու առաջիկա նիստում: Այդ որոշման նախագծում առանձին դրույթներով ամրագրվում են համապատասխանհողամասերի նպատակային և գործառնական նշանակության (կամ հողատեսքերի) փոփոխությունները: Համայնքի ավագանու կողմից որոշումը հաստատվելուց հետո համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում նշված որոշմամբ նպատակային նշանակությունը փոփոխած՝ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի վրա կառուցապատում իրականացնելու նպատակով տրամադրում է ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, որոնք սահմանված կարգով արտացոլում է համայնքի ընթացիկ քարտեզում:

Թիվ թիվ 5-Ա և 7-Ա որոշումների նախաբաններում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետին կատարված հղումը սխալ է (նշված որոշումներով համայնքի ղեկավարը սահմանել է ոչ թե շենքերի կամ շինությունների, այլ հողամասերի համարակալումը): Հետևաբար անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասի» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետին:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
15.02.2021թ.